

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն №)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԻՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսումնամեթոդական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) համալսարանի կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման, ուսման որակի վերահսկողության և ինքնավերլուծության, ուսումնական և ուսումնամեթոդական գործընթացների պլանավորման և կազմակերպման, համալսարանի մասնագիտությունների լիցենզավորման ու հավատարմագրման գործընթացները պլանավորող և իրականացնող, մինչև համալսարանական, լրացուցիչ, շարունակական կրթության, վերապատրաստման մագիստրատուրայի ու մասնաճյուղերի գործունեությունը պլանավորող, համակարգող և վերահսկող կառույց է:
- 1.2. Կենտրոնն իր գործունեությունը կանոնակարգում է ՀՀ ազգային ժողովի և կառավարության որոշումներով, ՀՀ Կրթության և գիտության նախարարության նորմատիվային փաստաթղթերով, համալսարանի կանոնադրությամբ, համալսարանի գիտական խորհրդի, ռեկտորատի որոշումներով, ռեկտորի հրամաններով և Կենտրոնի կանոնակարգով:
- 1.3. Կենտրոնը ղեկավարում է տնօրեն-պրոռեկտորը, որին աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է համալսարանի ռեկտորը:
- 1.4. Ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտորը ի պաշտոնե ընդգրկվում է համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի կազմերում:

1.5. Ուսումնամեթոդական կենտրոնի կառուցվածքը հաստատվում է համալսարանի գիտական խորհրդի կողմից և վավերացվում ռեկտորի հրամանով:

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

2.1. Ուսումնամեթոդական կենտրոնը կազմված է չորս բաժիններից՝

- Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների բաժին,
- Ուսումնական գործընթացի վերահսկման, ինքնավերլուծության և որակի կառավարման բաժին,
- Ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման բաժին,
- Ուսումնամեթոդական նորմատիվային փաստաթղթերի, գրականության և շարունակական կրթության բաժին:

2.2. Ուսումնամեթոդական կենտրոնի հաստիքային աշխատակիցների պարտականությունները բխում են Կենտրոնի խնդիրներից և գործառույթներից:

2.3. Կենտրոնի հաստիքային աշխատակիցները պաշտոններում նշանակվում կամ ազատվում են ռեկտորի հրամանով՝ կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի առաջարկությամբ:

3. ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ, ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺԻՆ

3.1. Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների (ԿԲՌՊՆՏ) բաժինը Ուսումնամեթոդական կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանում է, որի հիմնական նպատակն է համալսարանի կրթական բարեփոխումներին ուղղված աշխատանքների իրականացումը:

3.2. ԿԲՌՊՆՏ բաժնի խնդիրները և գործառույթները.

- Համալսարանում որակի Եվրոպական ու ազգային չափանիշների, չափորոշիչների և ուղենիշների ներդրում:
- Համալսարանի առաքելությունից բխող՝ համալսարանի զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում, համալսարանի զարգացման հիմնական գերակայությունների, նպատակների և խնդիրների բացահայտում և ամրագրում:

- Կրթական ծրագրերի պարբերական վերանայման ու մոնիթորինգի, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների վերահսկման մեխանիզմների մշակում ու կատարելագործում:
- Համալսարանի բոլոր կրթական ծրագրերում (միջին մասնագիտական, բակալավրային, մագիստրոսական, ասպիրանտական) կրեդիտային համակարգի վերանայում և կատարելագործում:
- Կրթության որակի ապահովման ներբուհական նոր մեխանիզմների մշակում և ներդրում, որակի ապահովման համապատասխան ներքին մեխանիզմների ու ստորաբաժանումների շարունակական զարգացման և կատարելագործման գործունե համակարգի ստեղծում:
- Նոր կրթական տեխնոլոգիաների ուսումնասիրում և վերլուծություն:
- Կրթական գործունեության որակի ապահովման գործընթացի շարունակական բարելավման մեխանիզմների մշակում, կրթական համակարգի մոնիթորինգի և գնահատման արդյունքների հիման վրա կրթության որակի կառավարման համակարգի կատարելագործում:

4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ

- 4.1. Ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման բաժինը Ուսումնամեթոդական կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանում է, որի հիմնական նպատակն ուսումնական գործընթացի պլանավորումն է:
- 4.2. Ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման բաժնի խնդիրները և գործառույթները.
 - Գործող և նոր մասնագիտությունների ուսումնական գործընթացի կազմակերպման նորմատիվային փաստաթղթերի (ուսումնական պլաններ, ծրագրեր, չափորոշիչներ) վերաբերյալ ստացված առաջարկությունների քննարկում և մշակում:
 - Համալսարանի լսարանային ֆոնդի կանխատեսում ու պլանավորում և ուսումնական գործընթացի լսարանային ապահովման նպատակով՝ լսարանային ֆոնդի հաշվառում և նպատակային բաշխում:
 - Պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքների և տարակարգերի պլանավորում:

- Համալսարանի կրթական տարբեր աստիճանների մասնագիտությունների լիցենզավորման աշխատանքների իրականացում:
- Ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային ապահովման պլանավորում և առաջարկությունների ներկայացում:
- Պրոֆեսորադասախոսական կազմի, ամբիոնների և ֆակուլտետների կիսամյակային և տարեկան ծանրաբեռնվածության կազմում, հաշվառում և համակարգում:
- Պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքների հաշվարկում, դասախոսների անհատական և ամբիոնների ուսումնական ծանրաբեռնվածության պլան-կատարողականի ստուգում, ժամավճարային ֆոնդի օգտագործման արդյունավետության վերահսկում և վերլուծություն:
- Ուսումնամեթոդական աշխատանքներին վերաբերող փաստաթղթերի, ձևերի, տեղեկանքների և հրամանների նախապատրաստում և դեկանատներին ու ուսումնական այլ ստորաբաժանումներին դրանց տրամադրում:
- Նախորդ կիսամյակի արդյունքներով, յուրաքանչյուր կիսամյակում ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման անանուն հարցման իրականացում, ստացված արդյունքների մշակում և համապատասխան առաջարկությունների ներկայացում:
- Ֆակուլտետների և ամբիոնների կրթական, ուսումնական աշխատանքների ժամավճարների կազմման, բաշխման և կատարման, ուսումնական գործընթացի, գրաֆիկների, անհատական պլանների կազմման, ձևավորման ու ժամանակին դրանց կատարման կազմակերպում և վերահսկում:
- Պետական քննական հանձնաժողովների աշխատանքների արդյունքների ամփոփում, վերլուծություն և առաջարկությունների ներկայացում:
- Վկայականների, ակադեմիական տեղեկագրերի և այլ կրթական փաստաթղթերի սահմանված կարգով ձևակերպում և տրամադրում:
- Ամբիոններին և դեկանատներին ուսումնական գործընթացի վերաբերյալ նոր օրենքների, օրենսդրական ակտերի, կարգերի, հրահանգների և այլ դիրեկտիվ ցուցումների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ներկայացում:
- Ֆակուլտետների և ամբիոնների կողմից ուսանողների ուսումնական, արտադրական, նախադիպլոմային պրակտիկաների, գործնական և այլ կիրառական (բանվո-

րական մասնագիտությունների ձեռքբերման) աշխատանքների համակարգում, կազմակերպում և վերահսկում:

- Թողարկող (մասնագիտացնող) ամբիոնների հետ համատեղ ուսումնաարտադրական, նախադիպլոմային պրակտիկաների օբյեկտների ընտրության, դրանց շրջանակների ընդլայնման և պայմանագրերի կնքման աշխատանքների կազմակերպում և իրականացում:
- Գործարանների, ֆերմերային տնտեսությունների գյուղատնտեսական վերամշակող և այլ ձեռնակությունների, մարզպետարանների և այլ հաստատությունների ու կազմակերպությունների հետ կապերի հաստատում:
- Քննաշրջանների արդյունքների ամփոփում և վերլուծություն, ուսանողների շարժի հաշվառում և վիճակագրության իրականացում:
- Պետական քննական հանձնաժողովների կազմի նախապատրաստում և հաստատման ներկայացում, հանձնաժողովների աշխատանքների համաձայնեցում և ժամկետավորում:
- Պետական քննությունների և դիպլոմային աշխատանքների (նախագծերի) պաշտպանության արդյունքների ամփոփում և վերլուծություն:

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՐՆԹԱՅԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ, ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ

5.1. Ուսումնական գործընթացի վերահսկման, ինքնավերլուծության և որակի կառավարման բաժինը Ուսումնամեթոդական կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանում է, որի հիմնական նպատակը համալսարանի որակի վերահսկման համակարգի և դրան վերաբերվող փաստաթղթային փաթեթների մշակումը, կատարելագործումը և ներդրումն է, ինչպես նաև ինքնավերլուծության և ինքնագնահատման գործընթացների իրականացման համակարգումը:

Ուսումնական գործընթացի վերահսկման, ինքնավերլուծության և որակի կառավարման բաժնի խնդիրները և գործառույթները.

- Համալսարանի զարգացման ռազմավարական դրույթներին համապատասխան՝ որակի վերահսկողության քաղաքականության իրականացում:
- Կրթության որակի վերահսկման ներբուհական նոր մեխանիզմների մշակում և ներդրում, որակի ապահովման համապատասխան ներքին մեխանիզմների ու ստորաբաժանումների որակի վերահսկման շարունակական զարգացող և կատարելագործված՝ գործուն համակարգի ստեղծում:
- Գործող օրենսդրության, կանոնակարգերի, գիտական խորհրդի, ռեկտորատի որոշումների, հրամանների և համալսարանում հաստատված այլ նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան՝ ուսումնական գործընթացների իրականացման գնահատում և վերահսկողություն:
- Համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի և որակավորումների բարձրագույն կրթության ստանդարտներին և չափորոշիչներին համապատասխանության ապահովում:
- Համալսարանում ուսուցման որակի մշակույթի ձևավորմանն ու տարածման գործընթացներին աջակցում, համալսարանի ռազմավարական նպատակների իրականացման գործընթացներին նպաստում:
- Պետական կրթական չափորոշիչներին և ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցների պահանջներին՝ ուսումնական և օրացույցային պլանների և առարկայական ծրագրերի համապատասխանության ուսումնասիրություն և վերահսկում:
- Բակալավրիատի և մագիստրատուրայի առարկայական ծրագրերի ուսումնասիրում, թերությունների բացահայտում և համապատասխան առաջարկությունների ներկայացում:
- Համալսարանում ընթացող ուսումնական, ուսումնադաստիարակչական, մեթոդական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման նկատմամբ վերահսկողության սահմանում:
- Համալսարանում իրականացվող ուսումնական գործընթացների նկատմամբ վերահսկողության սահմանում:
- Ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի կիրառման և ուսանողների ինքնուրույն և անհատական աշխատանքների կատարման գործընթացների վերահսկում:

- Ընդունված չափորոշիչներին համապատասխան ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների կազմակերպման և անցկացման գործընթացների վերահսկում, դրանց նպատակային և արդյունավետ անցկացման համար՝ համապատասխան բազաների առկայության գնահատում,
- Կուրսային և դիպլոմային նախագծերի (աշխատանքների), հաշվարկագրաֆիկական աշխատանքների սահմանված ժամանակացույցին համապատասխան և որակով կատարման ընթացքի վերահսկում, դրանց թեմատիկայի, արդիականության և դիպլոմային նախագծերի գրախոսման գործընթացների վերահսկում:
- Ֆակուլտետի դեկանատներում և ամբիոններում պահպանվող փաստաթղթերի առկայության և գործավարության վիճակի ուսումնասիրում և դրանց իրականացման վերահսկում:
- Ուսանողների միջանկյալ և ամփոփիչ քննությունների և առաջադիմության վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար հավաքագրման, մշակման և արդյունքների վերլուծության գործընթացների նկատմամբ վերահսկողության իրականացում:
- Ամբիոններում, պրոբլեմային լաբորատորիաներում և գիտական կենտրոններում գիտական աշխատանքների թեմատիկայի արդիականության, կատարման ընթացքի և որակի ապահովման ու վերահսկողության իրականացում:
- Համալսարանում իրականացվող ինքնավերլուծության և ինքնագնահատման գործընթացների կազմակերպման կոորդինացում և համակարգում:

6. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

- 6.1. Ուսումնամեթոդական նորմատիվային փաստաթղթերի, գրականության և շարունակական կրթության բաժնի նպատակը համալսարանի ներքին նորմատիվային փաստաթղթերի մշակումն ու ներդրումն է և համալսարանում հանրակրթական, լրացուցիչ, շարունակական մասնագիտական կրթության ապահովումը:
- 6.2. Ուսումնամեթոդական նորմատիվային փաստաթղթերի, գրականության և շարունակական կրթության բաժնի խնդիրները և գործառույթները.

- Ուսումնամեթոդական նորմատիվային փաստաթղթերի մշակման և ներդրման գործընթացի կազմակերպում:
- Մեթոդական և հրատարակչական խորհրդի հետ համատեղ ուսումնամեթոդական գրականության հրատարակման հեռանկարային պլանների կազմում և ամբիոնների կողմից դրանց փաստացի իրականացման վերահսկում:
- Շարունական կրթության ապահովման գործընթացի կազմակերպում և վերահսկում:
- Համալսարանում լրացուցիչ կրթության ծրագրերի մշակում և զարգացում:
- Համալսարանում իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի օրինակների հավաքում և պահպանում:
- Համալսարանում ուսումնական գործընթացի մեթոդական ապահովման պլանավորում, կազմակերպում և կատարելագործում:
- Ուսումնական, ուսումնամեթոդական և այլ գրականության մշակման և գործածության մեջ ներդրման մշտադիտարկում:
- Ուսումնամեթոդական գրականության պահանջարկի վերլուծություն:
- Ուսումնամեթոդական և տեղեկատվական նյութերի (բուհական մեթոդական ցուցումներ, գրքեր, ձեռնարկներ, դասավանդման աուդիո-, վիդեո- նյութեր) կատալոգների և տվյալների բազային ստեղծում:
- Համալսարանում իրականացվող ուսումնամեթոդական աշխատանքների վերահսկում:
- Մասնագետների պատրաստման բոլոր ուղղություններով և մասնագիտություններով: Կրթական գործընթացի ուսումնամեթոդական ապահովվածության վերլուծություն
- ՀԱԱՀ հենակետային վարժարանի, մարզային ավագ դպրոցների, մինչհամալսարանական կրթության համագործակցության կոորդինացում, ուսումնամեթոդական օգնության ցուցաբերում, աշակերտների շրջանում մասնագիտական կողմնորոշման իրականացում:
- Հանրապետությունում գործող ավագ դպրոցների և վարժարանների հետ համատեղ կրթական գործունեության իրականացման վերաբերյալ երկարաժամկետ համաձայնագրերի կնքում:
- Ուսանողների, շրջանավարտների և դասախոսական կազմի լրացուցիչ ու շարունակական մասնագիտական ուսուցման պլանավորման և կազմակերպման, այդ գործըն-

թացների կատարելագործման հնարավորությունների և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայրի ստեղծում:

- Հանրապետության գյուղատնտեսական ուսումնական հաստատությունների և գյուղատնտեսական արտադրության մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման նպատակով՝ ուսումնական և գիտամեթոդական աշխատանքների իրականացում:
- Գյուղատնտեսական կրթություն չունեցող գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող, անձանց ուսուցման կազմակերպում և որակավորման բարձրացում:
- Համալսարանում ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական ապահովման որակի վերահսկում: